

ՈՒՐԱՐՏԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

1. ԵՐԿՈՒ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատմության պետական թանգարանի սեպագրիչների հավաքածուն նայելիս հայտնաբերել ենք մի քանի անհայտ արձանագրությունների լուսանկարներ, որոնցից երկուսը ներկայացնում ենք այստեղ: Հավանաբար դրանք գտնվել ու նկարահանվել են Վանում կամ նրա շրջակայքում:

ա) № 1132 սեպագրի (նեգատիվ) վրա պատկերված է ուրարտական կոթողի ցածի մասը՝ բնորոշ փշիկով, որով կոթողը ամրացվել է պատվանդանին (նկ. 1):

Ստուգումից պարզվեց, որ այս քարը իր վրա կրած արձանագրությամբ որևէ տեղ չի հրատարակված: Այն դուրս է մնացել նաև Գ. Ա. Մելիքիշվիլու և Ֆ. Վ. Քյոնիգի ժողովածուներից:

Բնագիրը տողատված է համաշափ և կրում է ուրարտական սեպագրությանը հատուկ գեղեցիկ փորագրություն. յուրաքանչյուր տող պարունակել է 6—9 սեպախումբ: Պահպանված է միայն վերջին 10 տողը, որոնցից մեկում՝ վերին տողում, առանձին սեպահետքեր են միայն նկատվում, մնացած 9 տողի վերծանումը թեև առանձին դժվարություն չի հարուցում, սակայն բառակազմական ու ոճական յուրօրինակությունը, ինչպես և բնագրի պակասավոր վիճակը արձանագրության թարգմանությունը դարձնում են ոչ այնքան վստահելի: Բնագիրը չի պահպանել նաև հեղինակի անունը:

Փորձենք մեկնաբանել այս հետաքրքիր բեկորը:

X+1	- - - - -	šú-ḫi ba-at-qi-i-a-ni
	[t]i-i-ni te-er ¹ -di-la-ni	nu-lu-us-tú-ü-i-ni-ni
	a-lu-se ü-la-a	ᵔ Hal-di-i-še e-ú-e
	ú-e si-du-li-i-[e]	DINGIR ^{MES} -a-[š]e pa-ri-e
X+1	a-lu-še ü-i-[e]	X+10 e-si-ni [te ¹ -e-la-a-ni

Առաջին տողում պահպանված սեպահետքերը հնարավորություն չեն տալիս վերականգնելու տողը: Մեզ թվում է, որ բոլոր հնարավոր սեպախմբերից:

¹ Ուրարտերենում  նշանը, ըստ երևույթին, ավելի հաճախ կիրառվել է իր er նշա-

նակությամբ, որը անառարկելի է հատկապես այն դեպքերում, երբ նրան նախորդում է e ձայնավորը կամ e-ով ավարտվող որևէ բաց վանկ: Այս ենթադրության համար ամուր կույան է նաև er- բայարմատը, որից և, անշուշտ, կազմվել են՝ te-er-du-li-ni, te-er-di-la-ni-/ni/բայաձևերը



տողավերջում ամենահավանականը ¹ նշանի վերականգնումն է: Թերևս այս արձանագրությունը մոտ է իր էության մարգարի Բ-ի մի արձանագրությանը. սա միակ դեպքն է, ուր կրկնվում է մեր՝ երկրորդ տողում շարունակվող կապակցությունը և ուր, առհասարակ, բնագրի հիմնական բովանդակությունը գրված է՝ բայի ժամանակի տեսակետից, միևնույն շարահյուսությամբ²: Սակայն իր յուրօրինակությամբ ու հատկապես 6-րդ տողի բովանդակությամբ այս արձանագրությունը առնչվում է մեղ հայտնի վիմագրերից միայն երկուսի հետ³, որոնք հիշատակում են ուրարտական Մինուա թագավորին: Անհավանական է, որ այս նոր արձանագրությունը ևս պատկանած լինի Մինուային: Լեզվա-ոճական տվյալ կառուցվածքի այլ արձանագրություն մեզ հայտնի չէ:

Երկրորդ տողի *tini terdilani-*ից վերջինը, անշուշտ, բարդ բառ է, կազմված *ter(u)-* «դնել, հաստատել, սահմանել» և *d(u)-* «անել, կատարել» բայարմատներից: Այս բայաձևը հանդիպում է հաճախ *terdulini* ձևով և կիրառվում է մեծ մասամբ կրոնա-ծիսակատարական բնույթի հատվածներում, անպայման տարբերվելով անեծքի ձևակերպման մեջ հանդիպող և ըղձական եղանակը կազմող *-lie* վերջավորությամբ բայաձևերից:

Եթե հետևենք Ա. Գյոտցեին, ապա *terdilani*-ն պետք է նշանակի «դնել, սահմանել» անցողական բայի ստորադասական-ըղձական եղանակի ապառնի ժամանակը, եզակի 3-րդ դեմք⁴: Այսպիսով, երկրորդ տողում կստացվի՝ «...անուն որպեսզի (նա) սահմանի»:

3—4-րդ տողերում կարդում ենք *aluše ula ue sidulie*, որից (հատկապես *sidulie* բայաձևից) որոշակի կարելի է ենթադրել, որ վիմագրի մեղ հասած հատվածը պարունակում է անեծքի մասը: Այդ հատվածը սակայն, իր բովանդակությամբ խիստ տարբեր է այլ վիմագրերում հաճախ հանդիպող անեծքի սովորական շարադասությունից, թեև այստեղ էլ բայը, անկասկած անցողական, արտահայտում է ստորադասական եղանակի ապառնի ժամանակ, եզակի 3-րդ դեմք: Այսինքն, ամենայն հավանականությամբ, փոխարինում է վաղուց հայտնի *ulīe* «ուրիշ» բառին, ըստ երևույթին, -a հոգնակիակերտ ու տեղյուց տվող մասնիկով⁵: Այս ձևով հիշյալ բառը հանդիպում է առաջին անգամ և բառացի նշանակում է «այլոց մեջ»: Պարզ չէ *sidulie* բայիմաստը. թերևս այն առնչվում է *siditu-* բայի հետ, որի իմաստը նույնպես անորոշ է⁶: Այն հանդիպում է նաև կավե վավերագրերից մեկում *sidu-ni* ձևով⁷, եզակի 3-րդ

² Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, 169, Հմտ. *kuidiani, lakulani, terdilani* և *terdilani* բայաձևերը մեր արձանագրության նույնակերպ՝ *terdilani, batqiani, telani* բայաձևերի հետ:

³ УКН, 100, 124.

⁴ A. Goetze, On Some Urartean verbal form. „Revue Hittite et Asiatique (RHA)», 24, էջ 276—283, նաև՝ УКН, էջ 74:

⁵ Պարզ է, որ այն չի կարող *ula*-«զնալ» անանցողական բայարմատը լինել, քանի որ զուրկ է անհրաժեշտ խոնարհից (*ula-di, ula-bi* և այլն):

⁶ УКН, 333, առջևի նիստ, տող 8: И. М. Дьяконов, Урартские письма и документы, 1963 (УПД), 2, տող 8:

⁷ УПД, 7, տող 1, հակառակ նիստ:

դեմքով: Ի. Մ. Դյակոնովը հալանական է համարում թարգմանել այն «թող-նել» կամ նման որևէ իմաստով⁸:

Մեր օրինակում բայը կիրառված է ժխտական առումով (u(i)e «ոչ», «չ» sidulie): Առայժմ դերադասում ենք այդ բառը չթարգմանել:

5—6-րդ տողերում թեև առանձին բառեր ծանոթ են⁹, սակայն ընդհանուր իմաստը կարծեք թե մնում է անորոշ: 5-րդ տողի uie-ի u-ն հաղիվ թե տվյալ դեպքում դադափարադրային կիրառություն ունենա, ուստի և այն ընկալում ենք որպես ժխտական փմաստի նույն u(i)e բառը. 6-րդ տողում անցողական բայաձևը, ըստ երևույթին, կաղմվել է batqidudiani բարդությունը և օրինաչափորեն ստացվել է batqiani հրամայական եղանակի, արդելական ձևը, եղակի 3-րդ դեմք (հմմտ. lakuiani < lakudu-diani)¹⁰:

Այսպիսով, 5—6 տողերի թարգմանությունը կլինի՝ «ուլ ոչ նորից batqiani»:

7-րդ տողը պարունակում է նորից անցողական մի բայ՝ nuluštuinini, հրամայական եղանակի իր կաղմությունը ու շարահյուսության մեջ դրաված դերով նման turinini բային, միայն այն տարբերությամբ, որ մեր օրինակում բայահիմքի u-ն պահպանված է: Հալանաբար, այն իր իմաստով էլ մոտ է վերոհիշյալ բային (turinini «թող ոչնչացնի»)¹¹:

8 — 9-րդ տողերի իմաստը համեմատաբար պարզ է. D̂Haldiše eue DINGIR^{MEŠ}-aše parie «(աստված) Խալդին eue աստվածները (բոլոր) մինչև...»: Այստեղ հետաքրքրական է eue բառը, որ անկասկած համադոր է «և» շաղկապին. սա բառի կիրառման երկրորդ դեպքն է և սակայն, ըստ երևույթին, իրավացի է Ֆ. Բյոնիգր, երբ այն նույնացնում է ուրարտերեն e'a («և») շաղկապի հետ¹²: Բառի -ue մասը, հավանաբար փոխարինում է 'a հնչյունին, որը ուրարտացիք երևի, հնչել են նաև 'u¹³: Վերջին դեպքում կստացվի բառի eu(e) արտասանությունը, որը շատ մոտ է հայերեն «եվ» շաղկապին, ոչ միայն կաղմության մեջ ու իմաստով, այլև իր հնչմամբ: Թերևս երկուսն էլ մի ընդհանուր աղբյուրից են ծագել¹⁴: Այսպիսով, 7—9-րդ տողերի թարգմանությունը կլինի՝ «...թող ոչնչացնեն»¹⁵ (աստված) Խալդին և աստվածները (բոլոր) մինչև...»:

10-րդ տողի esini telani-ն դերադասում ենք չթարգմանել. esini-ն անկասկած ուրարտերեն esi «տեղ» բառն է, -ni հոլովանիշով, թեև բացառված չէ, որ այն արտահայտի որոշյալ հոգի իմաստ: Իսկ telani բայաձևը ակնհայ-

⁸ Н. М. Дьяконов, *Ур. 2*, т. 2, № 30, Բերես հնարավոր է թարգմանել՝ «զգուշացնել», «համոզել», «կանխել» իմաստներով:

⁹ Այսպես, օրինակ՝ ըստ Ի. Մ. Դյակոնովի, 6-րդ տողի suḫi batqiani-ն կթարգմանվի «...նորից վերականգնի» (УПД, բառացանկը):

¹⁰ A. Goetze, *Indefinites and negations prohibitive and imperative in the Urartean Language*. RHA, 22; Г. А. Меликишвили, *Урартский язык*, 1964, стр. 55.

¹¹ Г. А. Меликишвили, *Урартский язык*, стр. 53.

¹² F. W. Kōnig, *Handbuch der chaldäischen Inschriften* (HchI), 1, էջ 281, ծնթ. 16, էջ 181; ծնթ. 14:

¹³ Ինչպես, օրինակ՝ 'a-ն ուրարտերենում երբեմն փոխարինվում է u-a-ով՝ D'Arubani (ՄԿԽ, 27, տող 21, 63. 65, տող 34) և D'Uarubani (ՄԿԽ, 25, տող 5, 10):

¹⁴ Նշենք, որ հայերեն «եվ»-ը համարվում է հնդեվրոպական ծագումով բառ (Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ա մաս, էջ 48):

¹⁵ Բնագրում եղակի թիվ:

տորեն սերում է մեղ ծանոթ *teru-«դնել սահմանել»* բայարմատից¹⁶։ Բայի ըզ-
ձական եղանակը կազմված է բնով հանդիպում է միայն մեկ անգամ, հետևյալ
նախադասության մեջ՝ *aluse tinini tulie masie tini teli* «Ով անունն այս
ջարդի, իր անունը դնի...»¹⁷։ Մեր արձանագրության *telani* բայաձևը արտահայ-
տում է անցյալ անկատարի¹⁸ կամ հարկադրականի¹⁹, եզակի 3-րդ դեմքը։

Ինչպես տեսնում ենք, պահպանված այս փոքրիկ հատվածում կիրառված
ստանձին բառեր թեև հայտնի են, սակայն հանդիպող շորսից հինգ բայաձևե-
րից երեք-չորսի իմաստը պարզ չէ, ուստի և թարգմանությունը խիստ թեական
է։ Արձանագրությունը *YKH, 100, 124* վիմագրերի հետ միասին, կազմում է
մի առանձին խումբ, որի մեկնաբանման համար, կարծում ենք, անհրաժեշտ
են լրացուցիչ նոր նյութեր։

Բոլոր դեպքերում ուրարտական կոթողի այս բեկորը ինքնին մասնակի
հետաքրքրություն է ներկայացնում իր հայտնաբերման փաստով և, մանավանդ,
յուրօրինակ բովանդակությամբ։ Նրա հնարավոր թարգմանությունը հետե-
վյալն է՝

X+10	- - - - -	նորից <i>batqlani</i> ,
	անուն որպեսզի (նա) սահմանի։	թող ոչնչացնեն ("") ²⁰
	Ով այլոց մեջ (?)	(աստված) հալդին և
	ոչ <i>sidulie</i> ,	աստվածները (բոլոր) մինչև
X+5	ով ոչ	X+10 <i>esini telani</i>

Ըստ երևույթին, ինչ-որ ձեռնարկության (այգի, կառույց, շրանցք և այլն)
անվանակոչման առթիվ կոթող է կանգնեցվել, որի վրայի արձանագրությունը
ավարտվել է անեծքով, երևի, կոթողը տեղահանողի հասցեին. սրա դատել
հանձնվում է աստվածներին, մինչև թերևս, կոթողը նորից տեղը դրվի (կամ
նման մի բան)։

Բ) № 3895 սևապակու վրա պատկերված է կլոր սյան հիմք, որի վերին
հզրին փորագրված է մեկ տող գրություն (նկ. 2)։ Լուսանկարը ներկայացնում
է քարի, ինչպես նաև գրության մի մասը միայն։

Պահպանված բնագիրը, հետևյալն է.]-ni LUGĀL DAN.NU a-lu-si
URU.Tu-uš-pa-a URU...

Սյան նման խարսխներ հայտնի են ուրարտական թագավորներ Իշպուի-
նիի, Մինուայի և Արգիշթի Ա-ի անուններով²¹։

Ի տարբերություն Արգիշթի Ա-ի թողած սյան հիմքերի վրայի արձանա-
գրությունների, Իշպուինիի և Մինուայի նմանօրինակ վիմագրերը կրում են
միևնույն բովանդակության եռակի կրկնությամբ, երեքական տող։ Սրանք
չունեն նաև ²²*Haldinini alsuišini* դարձվածքը։ Յուրաքանչյուր շրջագիծ պա-

¹⁶ Հետաքրքրական է նշել, որ հայերենում էլ «գնել» բայը նման մի անկանոն բայ է։


¹⁷ *YKH, 281, տող 38—40*։

¹⁸ Г. А. Мелликишвили, Урартский язык, 1964, էջ 51։

¹⁹ И. М. Дьяконов, Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков. Переднеазиатский сборник, 1961, էջ 410, նույնի, Языки Древней Передней Азии, 1967, էջ 155, աղ. 7։

²⁰ Կամ՝ «պաշտեն» ("")։ Հիշյալ բառը հանդիպել է միայն մի անգամ (*YKH, 127, II, տ. 42*), որ հաղիվ թե այն նշանակի «կառավարել», ինչպես առաջարկում է թարգմանել Ի. Մ. Դյակոնովը (*УПД, էջ 90*)։

²¹ *YKH, 4—10, 13, 82—87, 140, 141* և այլն։



Նկ. 2

բունակում է 25—28 նշան: Բնադիրը հաղորդում է Է «տուն» կամ Է ašihusi, որոշ տեսակի շենք կառուցելու մասին:

Նախքան Արին-բերդի պեղումները մեզ հայտնի նման քարերը գտնվել են ոչ իրենց նախնական տեղում²², ուստի դժվար էր ասել, թե ի՞նչ շենքի են պատկանել դրանք. «տուն» գաղափարագիրը մի խումբ մասնագետներ թարգմանել են տաճար իմաստով (Յ. Ֆրիդրիխ, Գ. Ա. Ղափանցյան և ուրիշներ), ոմանք՝ հենց «տուն» իմաստով (Գ. Մերեթելի, Գ. Ա. Մելիքիշվիլի և ուրիշներ):

«Տաճար» թարգմանության համար որոշ երկնտրանք է առաջացնում այն հանգամանքը, որ Իշպուրին և Մինուան որևէ աստծու չեն հիշատակում հիշյալ արձանագրությունների մեջ: Այդ տեսակետից պարզեցնող երանգ են տալիս Մինուայի նշված արձանագրություններից երեքը, որոնք խոսում են Է ašihusi շենքի մասին²³: Այս բառը մենք ընկալում ենք որպես «տուն վահանի»՝ վահանանոց²⁴, թեև բացառված չէ, որ այն այլ իմաստ ունենա:

Բառի մեկնաբանմանը կարևոր օգնություն պետք է ցույց տան, իհարկե, գիտական հիմունքներով կատարվող պարբերական պեղումները: Առայժմ կարող ենք ասել հետևյալը. մեզ հետաքրքրող կառույցը, ըստ երևույթի, ունեցել է աշխարհիկ բնույթ: Դա հիմնավորվում է ոչ միայն էրեբունիում հայտ-

²² Արին-բերդում in situ գտնված սյան հիմքերը (թվով 5 հատ, միևնույն շենքից) նույնպես մեկ տողանի են և կրում են արմավիդյան երկու քարերի (ՄԿԽ, 140, 141) բովանդակությունը. D[Ha]-di-ni-ni al-su-i--š[il]-ni- l[Ar]-gi-l[š]-ti-l-še l[Mi]-l-nu-ú-a-ši-ni-e-še i-ni Է za-a-du-ú-ni

²³ ՄԿԽ, 83, 84, 86:

²⁴ Մ. Ա. Իսրայելյան, Կարմիր-բլուրի նորագյուտ արձանագրությունները: Հմմտ.

ur[š]i/u «գեներ», Էur[š]usi «գեներաց», aše «վահան», Էašihusi «վահանանոց»:

նաբերված աշխարհիկ բովանդակությամբ որմնանկարներով²⁵, այլև շատ կարևոր հետևյալ հանգամանքով. Արին-բերդի «տունը», ինչպես պարզել են պեղումները, վերափոխված է մառանի, նույն ուրարտացիների ժամանակ: Մեր համոզմունքով, հազիվ թե որևէ սրբավայր իր երկրպագողների ձեռքով վերափոխվեր սովորական պահեստի²⁶:

Անշուշտ, նման մի շենքի է պատկանել մեզ հետաքրքրող վիմագիրը, թեև, ինչպես պետք է ենթադրել պահպանված հատվածից, այս անգամ շինարարության մասին խոսք չկա: Տրված է շատ համառոտակի թագավորի տիտղոսաշարը, բայց ուրարտական ո՞ր թագավորին է հիշատակում, պարզ չէ:

Այս արձանագրությունը, ինչպես երևաց մեր պրպտումից, որևէ տեղ հրատարակված չի եղել: Միայն վերջերս Ֆ. Վ. Քյոնիգը իր աշխատության մեջ նշում է նման մի արձանագրություն, որը անհայտ պատճառներով վերագրում է Մինուային, ՄԿՄ-ում մեջ է բերված այդ արձանագրությունը ըստ Ֆ. Վ. Քյոնիգի ընթերցման, $D[Hal-di-ni-ni al-su-i-si-ni iMi-i-nu-a-ni iIs-pu-u-i-ni-e]^{*2}-bi LUGAL DAN.NU a-lu-si URUTu-uš-pa-a URU$

Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը չի պահպանել հեղինակի անունը, հայրանունը, ուստի և այն Մինուային վերագրելը որևէ կերպ չի հիմնավորվում²⁸:

Պահպանված հատվածը, բացառյալ առաջին bi սեպարմբից, տառացիորեն նույնն է մեր վիմագրի հետ: Արդյոք սա նո՞ւյն քարն է և Ֆ. Վ. Քյոնիգը $-ni$ -ի փոխարեն սխալմամբ $-bi$ է նշել, թե՞ մեր վիմագիրը բոլորովին նոր արձանագրություն է, դուրս մնացած բոլոր հրատարակված ժողովածուներից, դժվար է ասել, քանի որ բացակայում է Ֆ. Վ. Քյոնիգի՝ № 138 արձանագրության լուսանկարը:

Համենայն դեպս, մեր վիմագրում LUGAL նշանին նախորդում է բոլորովին որոշակի մի $-ni$, իսկ դրան նախորդող սեպահետքը, հավանաբար, կազմել

է $[t]i$  ալսինքն, մեր կարծիքով, այն պետք է վերականգնել այսպես.

²⁵ Б. Н. Аракелян, А. А. Мартirosян, Археологическое изучение Армении за годы советской власти, «Советская археология», № 4, 1967, стр. 34.

²⁶ Ն. Հարությունյանը ենթադրում է, թե E «տուն»-ը նույնն է $susi$ (տաճար) հասկացության հետ («Новые урартские надписи», էջ 73), մոռանալով ինչպես հնագիտական բոլոր տվյալները, այնպես էլ E «տուն» գաղափարագիրը կրող մի խումբ այլ արձանագրություններ, որոնք բնավ չեն առնչվում $susi$ -ի հետ: Ինչպես ցույց են տալիս Արին-բերդի պեղումները, $susi$ -ն պալատի ներսում գտնվող, համեմատաբար փոքր չափի, ալսինքն՝ պալատական տաճարն է, որը սովորաբար ձոնվել է հաղթի աստծուն, նույն հաղթի աստծուն ձոնվող E «տունը», ինչպես որոշակի մատնանշում է արինբերդյան մեծ տաճարի պատի մեջ բացված 8 տողից նոր արձանագրությունը, հաղթի մեծ տաճարն է, իսկ սովորական E «տունը» (որը որևէ աստծու ոչ միայն չի նվիրաբերվում, այլ երբեմն չի էլ հիշատակում և բոլորովին այլ շարահաստությամբ է հայտնի ու հանդիպում է սյան կլոր խարիճների վրա), բաղադրվել այլ ջենք է, հավանաբար, աշխարհիկ բովանդակությամբ և, անկասկած, նույնն է $ašišusi$ կառույցի հետ:

Սրանք այժմ, ինչպես վիմագրական, այնպես էլ հնագիտական տվյալներով, շատ որոշակի, իրարից տարբերվում են, և շփոթելու ո՛չ առիթ կա, ո՛չ կարիք:

²⁷ Վերականգնել է Քյոնիգը. HchI, II, 1957, № 138 (ՄԿՄ, ՄՍ — 4):

²⁸ Մենք այս արձանագրությունը դասում ենք մեր կազմած ժողովածուի անանուն կամ անորոշ վիմագրերի շարքը:

(D) [Hal-di-ni-ni al-su-i-ši-ni 'Ar-gi-iš-ti]-ni LUGÁL DAN.NU a-lu-si
URU Tu-uš-pa-a URU, որի հայերեն թարգմանությունը կլինի՝

«(Աստված) Խալդյան մեծությանը Արդիշթին թագավորը հզոր, տևող
Տուշպա քաղաք (ի)»:

Թեև հայրանունը չի նշված, բայց պետք է ենթադրել, որ հիշատակվում է
Արդիշթի Ա-ը, քանի որ հաջորդների անունով նման արձանադրություններ մեղ
չեն հասել, և հետո՝ Արդիշթի Ա-ի թողած նման քարերը, առանց բացառու-
թյան, բնորոշ են մեկ տող արձանադրությամբ և » [aldinini alsušini նախա-
բանով

Կա նաև երրորդ հանգամանքը, որ թեև լուսանկարով մի փոքր դժվար է
դատել, բայց, այնուամենայնիվ, նկատելի է, որ այն պատկերացնում է արձա-
նադրության գրեթե կեսը, ե, ուրեմն, պակասող մասը պետք է պարունակեր
մոտավորապես նույն թվով սեպագրեր, այսինքն՝ 12—16 նշան և ոչ թե 23
նշան, ինչպես վերականգնում է Ֆ. Վ. Քյոնիգը, եթե, իհարկե, նույն քարի մա-
սին է խոսքը:

Այսպիսով, Հայաստանի պատմության թանգարանում պահվող № 3895
սևտպակին, մեր կարծիքով, հիշատակում է ուրարտական մեծ ռազմավար
ու շինարար Արդիշթի Ա-ին, շատ համառոտ նշելով նրա արքայական տիտղո-
սը, դրանով իսկ, Ֆ. Վ. Քյոնիգի նշած № 138 արձանագրության հետ միասին
մտցնում է նոր երանգ ուրարտական «տներին»²⁹ պատկանող սյան խարիսխ-
անրի վրա փորագրված բնագրերի շարքում:

2. ԵՐԿՈՒ ԾՇՏՈՒՄ

Տարիների մեր աշխատանքի ընթացքում կատարել ենք մի շարք ճշտում-
ներ ուրարտական սեպագիր բնագրերում: Բերում ենք դրանցից երկուսը.

ա) Ուրարտական աստվածների պանթեոնը ներկայացնող արձանադրու-
թյան 19-րդ տողում³⁰, հենց տողասկզբի սեպագրերով մասնագետները վեր-
ծանել են DINGIR (աստված) բացահայտիչը, դրա հետևանքով էլ հաջորդ
šulni (naue) բառը կարող էր ընկալվել որպես հատուկ գոյական՝ աստվածա-
նուն: Ինչպես ցույց տվեց մեր ուսումնասիրությունը, այդ վերծանումը ճիշտ
չէ և շփոթեցնող: Խնդիրն այն է, որ նշված սեպագրերով մի փոքր վնասված է,
իսկ այս հանգամանքը վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից, և
սխալը կրկնվել է բոլոր հրատարակություններում, այդ թվում և Գ. Ա. Մելի-
քիշվիլու օրինակելի աշխատության մեջ:

Վնասված նշանի պահպանված մասը, իրոք, կազմում է DINGIR օօ

գաղափարագիրը, սակայն սրա հետ առնչվող նախադասության մյուս երկու
անդամները կրում են երկիր և լեռ բացահայտիչները. տրամաբանորեն տվյալ
դեպքում, մանավանդ šulni-naue (ծովերի) բառի առկայությամբ, պահանջվում
էր ջուր նշանակող բացահայտիչ, որը և ընձեռում է ENGUR գաղափարագիրը

731

²⁹ Այդ «տները» ամենայն հավանականությամբ, կազմել են հատկապես ուրարտական
բերդ-քաղաքների շինարարական համալիրի մեջ բաղկացուցիչ կարևորագույն մաս:

³⁰ ՄԿԽ, № 27, տող 19 (64):

Արձանագրության վնասված տեղը միայն ու միայն իրավունք է տալիս մեղ վերականգնելու և, առաջին անգամ լինելով, որպես բացահայտիչ նշելու ENGUR-ը: Սա նշանակում է «ծով», «օվկիան», «ջրային անհունություն»³¹:

Ուրարտական (նաև ակկադական) բնագրերում սովորաբար հանդիպում է

ՃԸ «գետ»³² գաղափարագիրը, որը որպես բացահայտիչ նախորդում

է հոսող ջուր նշանակող բառերին («գետ», «ջրանցք» և այլն)³²: Քննարկվող

արձանագրության մեջ ENGUR-ի կիրառման միակ դեպքն է սա (առանց

«ջուր» բաղադրիչ իմաստի): Այս առանձին կիրառությունը, կարելի է ենթադրել, թե մատնանշում է բացահայտիչ շնոսող ջրային տարածություն նշանակող բառի համար («ծով», «լիճ» և այլն): Այդ մասին է վկայում, թերևս, կարելի է այն հանգամանքը, որ ուրարտական մեզ հայտնի բնագրերում ID «գետ» բացահայտիչը «ծով» կամ «լիճ» (šue) բառի հետ չի հանդիպում³³:

Այսպիսով, մեղ հետաքրքրող հատվածը ստանում է արդեն ամեն կասկածից դուրս հետևյալ ամբողջական պատկերը. KUR-e-ba-ni-n[a-ü-e] DINGIR GUD II UDU³⁴ al-ga-ni-na-u-e DINGIR GUD II UDU³⁴ IENI GUR šu-ü-ni-na-ü-e DINCIR GUD II UDU³⁴. «(Երկիր) երկրների աստծուն՝ 1 եզ, 2 ոչխար, (լեռ) լեռների աստծուն՝ 1 եզ, 2 ոչխար, (օվկիան) ծովերի աստծուն 1 եզ, 2 ոչխար» զոհաբերել:

Ուրարտական պանթեոնում այլ եռաստվածություններին զուգահեռ, չհաշված, իհարկե, գլխավոր եռաստվածությունը, սա ևս մի եռյակ է, ներկայացված համեմատաբար որոշակի բովանդակությամբ:

բ) Ուրարտական թագավոր Մինուային հիշատակող մի արձանագրության վերծանման մեջ³⁵, սրա 14-րդ տողասկզբում կոպիտ վրիպում կա: Ռուս ակադեմիկոս արևելագետ Մ. Վ. Նիկոլսկին, որը այդ արձանագրության առաջին լավագույն հրատարակողն է, թյուրիմացաբար նշված տեղում կրկնել է նախորդ՝ 13-րդ տողասկզբի լուխիունի քաղաքանունը: Նիկոլսկին պարզապես շփոթել է տողերը: 14-րդ տողը կազմելիս աչքը, հավանաբար, ընկել է 13-րդ տողին: Այս սխալը նույնությամբ կրկնել են արձանագրության հետագա հրատարակողները³⁶, մինչդեռ հենց Նիկոլսկու մեջբերած (թեև անհաջող) նկարում պարզորոշ կարդացվում է էթիունի երկրանունը KUR-e-ti-ü-ni-ni³⁷:

³¹ МЭА, 484. Նաև՝ F. Delitzsch, 283. Deimel, 484-4.

³² МЭА, 579. F. Delitzsch, 323. Deimel, 579—427b.

³³ YKH, 127 II, առդ 30. 128 A2, տ. 11. 134, տ. 5, 155 E, տ. 51. 268 ա. 5. 12՝ 268 ա. 4, 10, 14, 21, 26 և այլն:

³⁴ YKH, 27, առդ 18—19:

³⁵ YKH, 30:

³⁶ CICH, 21, ադ. 13. J. Friedrich, Einführung ins urartäische gramm. Abriss (Einführung...), 9. YKH, 30. Hchl, 21:

³⁷ М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья. МАК, V, 1896, № 1, ադ. 4:

Այսպիսով, պարզվում է, որ Մինուայի ժամանակ (մ. թ. ա. 810—786) թերևս էթիունի երկրի կազմի մեջ է մտել նաև Արաքսի աջ ափը, մասնավորապես պատմական Ցուլակերաի (Իգդիրի շրջան, Դաշրուտուն) շրջակայքը, որի կենտրոն Լուխունի քաղաքը Մինուան վերաշինեց ու վերակոչեց իր անունով՝ Մինուախինի³⁸,

էթիունի երկրանվան նշանակության առթիվ մասնագետները տարակարծիք են³⁹,

Մենք գտնում ենք, որ ճիշտ են այն հետադոտողները, որոնք էթիունին համարում են ցեղերի մի դաշնակցություն⁴⁰, Որպես հիմք այդ մեկնաբանման համար պետք է ընդունել բառի էթիուխինի(լի) տոհմանվանական ձևի (սլատ-րոնիմիկային) կիրառությունը⁴¹, որը մատնանշում է ցեղային, տոհմային նախասկզբ, թեև էթիունին մեղ հայտնի բոլոր դեպքերում կրում է երկիր-բացահայտիչը, Այս երկրանվան էթիուխինի հոգնակի ձևով կիրառումը երեք թագավորների առնչությամբ (Ուտեբրուխի, Լուշտ, Կատարզա) նույնպես նպաստում է նման մեկնաբանմանը, ինչպես իրավամբ նկատել է նաև Բ. Բ. Պիտարովսկին, թեև ինքը ավելի հավանական է համարում, որ այն լինի հասարակ գոյական անուն⁴², Որ այն չի կարող հասարակ գոյական անուն լինել, մեր կարծիքով, պարզ երևում է հատկապես Արդիշթի Ա-ի տարեգրություններից, ուր էթիունին կիրառված է որպես հաթի, Աշուր, Մանա, Դիաուխի և այլ երկրների համարժեք մեծություն⁴³:

УРАРТОВЕДЧЕСКИЕ ШТУДИИ

М. А. ИСРАЕЛЯН

Резюме

Рассматривая фонд негативов Государственного исторического музея Армении, обнаружены 3—4 новые, еще не изданные надписи, из коих две публикуются в данной статье. Первая надпись по своему содержанию близка к УКН, 100, 124 и, отчасти, 169. Вторая надпись, состоящая из одной строчки, по всей вероятности, принадлежит Аргишти I.

Кроме того в данной статье предлагаем два исправления:

а) В УКН, 27 в начале строки 19 (строки 64 дубликата) вместо явно ошибочного чтения DINGIR следует читать ENGUR, что, как видно, является детерминативом для слов, обозначающих не текучие водные пространства (озеро, море и т. д.).

б) В УКН, 30 в начале строки 14, следует читать ^{KUR}E-ti-ú-ni-ni, вместо читавшегося раньше URULu-ú-ni-ni, что явилось результатом недоразумения, как это обнаруживается при внимательном рассмотрении фотоснимка.

³⁸ УКН, 31 (*), 70:

³⁹ УКН, էջ 426. Б. Б. Пиотровский, История и культура Урарту (ИКУ), 1944, էջ 28, 77—78; Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, 1940, էջ 95, նույնի, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, էջ 9 և շարունակություն:

⁴⁰ Գ. Ա. Ղափանցյան, նշվ. աշխ.

⁴¹ УКН, 20 առջևի նիստ, տող 31, հակառակ կողմ, տող 12,

⁴² ИКУ, էջ 78:

⁴³ УКН, 127 մասնավորապես II, տող 5, 25, 51—52, III, տող 20—21, 46—47, IV, 14—16, 42—43, 128 В 1, տող 27—28, А 2, տող 1—3, В 2, տող, 14—15, 37—38 և այլուր: Ի դեպ, կարծում ենք 128, А 3, տող 23-ում նույնպես պետք է վերականգնել [KURE-ti]-unini: